

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ԳՈ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ ИСТОРИЧЕСКИЙ МУЗЕЙ АН АРМ ССР

Աշխատություններ

№ 5, 1959

Труды

ԽԱԶԻԿ ՄԱԽԵՂՅԱՆ

ԴՎԻՆԻ ՄԻ ՔԱՆԻ ԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մինչև օրս մեղ հասած դրամները վկայում են, որ միջնադարան Հայաստանի ամենանշանավոր փողերանոցներից մեկը դորձնել է Դվին քաղաքում։ Թե և ըստ է հիմնվել Դվինի փողերանոցը և ի՞նչպիսի դրամներ է թողարկել, դժբախտաբար գրավոր տեղեկաթյուններ չանձնում։ Միակ զուսպ, ճշգրիտ վկայություններն այդ մասին հանդիսանում են հենց իրենք՝ Դվինի դրամները, որոնց թիվը գնալով մեծանում է դառնալով Հայաստանի դրամագիտության համար իրատ ոգշագրավ նյութ։ Դվինի դրամները մեղ հասել են մասամբ պատճենական դրամներից՝ շինարարական ու դաշտային աշխատանքների ընթացքում, ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, մասամբ էլ հենց իր իսկ՝ Դվին քաղաքի ավերակների հնագիտական պեղումներից (սկսած 1937 թ.): Ընդհանրապես Դվինի պեղումների ժամանակ հայտնաբերված հնադիտական նյութերի մեջ նշանակալից տեղ են դրավում դրամները։

Այսուղեղ մինք նպատակ ունենք հազորդելու Դվինում թողարկած այն դրամների մասին, որոնց վրա նշված է դրամահատման վայրը ուղղակի քաղաքի անունով։

Դեռևս Սասանյան իրանի քաղաքական տիրապետության ժամանակաշրջանում Առաջավոր Արևելքի շատ քաղաքներում կտրվում էին սասանյան դրամներ, որոնց շրջանառության մեջ հիմնական միավորը հանդիսանում էր արծաթ դրամը (գրախման)՝ նախնական 4,25 դրամ, մաշվածը՝ մինչև 3,90 դրամ քաշով։ Թողարկվում էր նաև $\frac{1}{2}$ դրամմա, $\frac{1}{6}$ դրամմա (մեկ օրով), նույնիսկ $\frac{1}{12}$ դրամմա (կես օրով)։

Սասանյան պղնձյա դրամները խիստ հազվագետ են և վերաբերում են մինչև 4-րդ դարի վերջերին։ Աննշան չափով թողարկվել են նաև սասանյան ոսկյա դրամներ, որոնք 4-րդ դարի վերջերին համապատասխանում էին բյուզանդական սոլիդին՝ 4,50 դրամ քաշով։ Դվինում սասանյան դրամներ թողարկելու մասին որոշակի տվյալներ չունենք։ Դժբախտաբար դեռևս լրիվ չեն մեկ-

Նարանված սասանյան դրամների վրա պահավերեն գրերով, երբեմն կրճատութևերով նշված փողերանոցների անունները: Ալդ առթիվ գոյություն ունեն տարբեր կարծիքներ, որոնց անդրադառնալը հատուկ քննության խնդիր է: Սակայն մասնավորապես Դվինի փողերանոցի կամ սասանյան դրամների վրա նշված Դվին անվան վերաբերյալ վերջերս, պրոֆ. Ե. Ա. Պախոմովը, ելնելով պահավերեն գրերի ընթերցման հնչյունաբանական առանձնահատկություններից, և իրանում 7-րդ դարում սասանյան դրամների օրինակ ով թողարկված այլ դրամների համեմատությունից, ինչպես նաև սասանյան դրամների տարածման տեղագրական տվյալներից, առաջ է քաշել այն միտքը, որ 580—590 թթ. սկսած սասանյան դրամ-

ների վրա գրված թիվ նշանները և սրանց մոտ 8 այլ տարբեր

տեսակները արտահայտում են Դվին բառը¹: Հետաքրքրական է, որ այդպիսի նշաններով գրվագած սասանյան դրամները շատ հաճախ են հանդիպում Արևելյան Անդրկովկասում և ընդհակառակը հազվագեց են վերջինիս սահմաններից դուրս: Դվին քաղաքը 5—7-րդ դարերում Հայաստանում նշանավոր կենտրոն էր Սասանյան պետության համար: Եվ եթե հիշենք, որ Դվինը մեծ քաղաք էր նաև միջազգային առևտրի ասպարեզում, ապա կարելի է ենթադրել, որ հենց Դվինում էլ կարող էր գործել Սասանյան իրանի բազմաթիվ փողերանոցներից մեկը: Համենայն դեպք 6-րդ դարում սասանյան դրամների վրա նշված «Դվին» = ԽՎԻ = ندو բառի պրոֆ. Ե. Ա. Պախոմովի ընթերցումը միանգամայն հավանական է:

Առաջավոր Արևելքի դրամական շրջանառության մեջ սասանյան դրամները իշխում էին Իրանի Սասանյան հարստության անկումից հետո ևս: Դեռ 7-րդ դարի 2-րդ կեսին Դվինի արտաքին և ներքին առևտրական գործարքները կատարվում էին սասանյան դրամաներով, որոնք շրջանառության մեջ հանդիս էին գալիս բրուգանդական դրամների հետ միաժամանակ:

8-րդ դարի հենց առաջին խակ տարիներից, արդեն միանգամայն որոշակի, հանդիս են գալիս Դվինում կտրված արծաթե ու պղնձե դրամները: Այդ դրամներն արաբատառ են, քուֆի գրերով; որոնք քաղաքական տեսակետից ներկայացնում են Հայաստանում արաբական խալիֆաթի իշխանությունը: Վերջինիս համար Դվին

¹ Е. А. Пахомов, О сасанидских монетных знаках. Доклады Азербайджанского филиала АН СССР, том I, № 1, 1945.

քաղաքը հանդիսանում էր գլարչական կենտրոն և Արմինիա կոչվող նահանգում, որի մեջ ընդգրկված էր ոչ միայն բուն Հայաստանի մեծ մասը այլև Աղվանքը ու հարեան Վրաստանի հարավարևելյան շրջանները։ Դվինում արաբական դրամների թողարկումը նախ և առաջ հետևանք էր այն դրամական ռեֆորմի, որը հիշրափի 70-ական թվականների կեսերին կատարվել էր խալիֆ Աբդ-ալ-Մելիքի կողմից։ Սակագել էր այնպիսի վիճակ, որ անցյալին մնացած սասանյան և բյուզանդական դրամներն ալլև չէին կարող բավարարել ապրանքափոխանակության պահանջները աշխարհի այն հսկայական մասում, որին տիրում էր արաբական խալիֆաթը։ Վերջինիս քաղաքական շահերը ևս պահանջում էին ստեղծել դրամի նոր տեսակ Եվ անա երեան են դալիս մուսուլմանական առաջին դրամները՝ համընդհանուր ողջ խալիֆաթի համար։ Ուղղափառ մահմեդականությունը դեմ էր պատկերներին, դրամի վրա հիմնականում նշվում էին Դուրանից քաղված հավատի վերաբերյալ ասուլիթներ։

Օմայան հարստության օրոք, մասնավորապես խալիֆ Աբդ-ալ-Մելիքի դրամական ռեֆորմից հետո, դրամների վրա որպիս կանոն նշվում էր մահմեդական հավատի նշանաբանի և Ղուրանի 112-րդ սուրայի խոսքերը։ Բացի այդ դրվում էր նաև թե որտեղ և երբ է կարգել դրամը։ Արծաթ և պղինձ դրամները թողարկվում էին խալիֆաթի գերիշխանության տակ եղած բազմաթիվ քաղաքներում, իսկ ոսկի դրամները դուրս էին դալիս Օմայանների ժամանակ Դամասկոսից, այսուհետև Աբբասյանների օրոք հիմնականում՝ Բաղդադից։ Լայն տարածում տներ միայն արծաթ դրամը՝ դիրքեմը (2,97 դրամ քաշով), որը և շրջանառության մեջ դրամական հիմնական միավորն էր։

Դվինի դրամների վրա քաղաքի անունը նշվում էր արաբական ձեռվ՝ Պաբիլ — (بابی): Հենց այն հանգամանքը, որ Անդրկովկասում արաբական խալիֆաթի առաջին դրամները կարգել են Դվին քաղաքում է նրա կարեւոր դերի ու նշանակության մասին՝ խալիֆաթի մեջ մտնող քաղաքների շարքում։ 8-րդ դարի հենց առաջին իսկ տարիներից Դվինում թողարկվող օմայան դրամները մանելով շրջանառության մեջ մի հատուկ ձեռվ կարծես թե ազգարարում էին արաբական խալիֆաթի իշխանության վերջնական հաստատումը Հայաստանում։

Ալդակիսի դրամներից մեզ հասած օրինակները հետեւալներն են։

ՕՄԱՅԱՆ ՀԱՐՍՑՈՒԹՅՈՒՆ

արձաք

1. Պարփիւ հիշրայի 84 (=մ.թ. 703) թ., դիրիելմ.

Առաջին երես՝ կենտրոնում, երեք տողով մուսուլմանական հավատի խորհրդարանի առաջին մասը¹ || ալլա || اللہ و حَلَه ||
بِسْمِ اللَّهِ صَرْبُ هَذَا الدِّرْهَمُ لِلشَّرِيكِ لَهُ بِدَبِيلِ سَنَةِ أَرْبَعٍ وَ ثَمَنِينِ
قَرْوَنْجِيَّهُ اَرْتَصَادِيَّهُنَّ երկուսի միջև 5 փոքրիկ շրջանիկներ:

Երկրորդ երես՝ կենտրոնում շրջագծի մեջ Դուրանի
الله اَحَدُ اللَّهُ || الصَّمْدُ لِمَ يَلِدُ وَ || 112-րդ սուրայից 4 տողով²
لِمْ يَوْلَدُ وَ لِمْ يَكُنْ || لَهُ كَفُوا اَدْ Շրջանավոր գրությունը Դուրանի
9-րդ սուրայի 33-րդ սուրայի, 61-րդ սուրայի 9-րդ սուրանա-
վորի տողերից³ Հովհաննես Ռուսական քաղաքացիներ:
محمد رسول الله ارسله بالهدى و دین الحق⁴ یا یلیظه ره علی الدین کله و لو کره المشرکون
են երկու շրջագծեր, որոնց միջև երկու տեղով պահպանիկներ են
մեկական կետեր:

Տրամագիծը 25,5 մմ, քաշը 2,77 գրամ, տե՛ս տախտակ Ա,
նկ. 1:

Դիմինի այս գիրհեմը ներկայացված է Բեռլինի թանգարանի
արևելյան գրամմերի շարքում⁵: Նմանօրինակ մի գիրհեմի մա-
սին էլ հիշատակված է Վ. Տիգենհառուկնի «Արևելյան խոլիֆաթի
գրամմեր» աշխատության մեջ, բայց առանց գրամի նկարագրից

¹ Զկա աստվածություն բացի | Ալլահից միակ | Հկո նրան հավասար ընկեր:

² Հանուն Ալլահի գրումած է այս գիրհեմը Դաբիլում ութուն չորս թվին:

³ Ալլահը միակ է, Ալլահը || հավիտենական է, նա չի ծնվել և || չի ծնում և չկա || նրան հավասար ոչ ոք:

⁴ Մուհամմեդն առաքյալն է Ալլահի, որն ուղարկել է նրան առաջնոր-
դությամբ և ճշմարիս հավատով, որպեսզի վերջինս հաղթող դարձնի բոլոր
հավատների վրա հակառակ կռապաշտների ընդդիմագրության:

⁵ H. Nützel, Königliche Museen zu Berlin, katalog der Orientalischen
Münzen, I, Berlin, 1898, № 1898, Taf. IV.

կամ պատկերը տալու¹: Նույն տվյալներով Դվինի մի ուրիշ զիրհեմ էլ հրատարակել է նաև Ա. Ան-ալուլը²:

2. Դարփիւ հիջրայի 85 (=մ. թ. 704) թ., զիրհեմ.

Առաջ ին երես՝ կինարոնում, երեք համակենտրոնացված շրջագծերի մեջ մուսուլմանական հավատի խորհրդաբանի առաջին մասը بسم الله وحده || لا إله إلا || بِسْمِ اللَّهِ وَحْدَهُ || لَا إِلَهَ إِلا هُوَ || اللَّهُ وَحْدَهُ || لَا شَرِيكَ لَهُ || اللَّهُ صَرَبَ هَذَا الدِّرْهَمَ بِدِبْيَلِ سَنَةِ خَمْسٍ وَ ثَمَنِينَ

Երեքորդ երես՝ կինարոնում, շրջագծի մեջ, չորս տողով الله أَحَدُ اللَّهُ || الصَّمَدُ لَمْ يَلِدْ || لَمْ يُوْلَدْ || لَمْ يَكُنْ || لَهُ كَفُوا أَحَدٌ [محمد] ۱۱۲-րդ սուբայի գրությունը. Երջանավոր գրությունը³ ։ Ու رسوْلُ الله ارسله بالهُدُى وَ دِينُ الْحَقِّ لِيُظْهِرُهُ عَلَى الْدِينِ الْخَوْفِيَّ (նկ. 2) լրիվ չի պահպանվել. այն մի բեկոր է զիրհեմի 2/3 մասի չափով և իրեն հազվագյուտ օրինակ գտնվել է Հստանիարում, հայտնաբերված 11-րդ դարի առաջի կեսին պատկանող արծաթ գրամմերի գանձի մեջ։ Ներկայումս պահպամ է Պետական երմիտաժի արևելյան գրամմերի բաժնում³ և առաջին անգամ հրատարակվել է Ռ. Ֆասմերի կողմից⁴:

3. Դարփիւ հիջրայի 86 (=մ. թ. 705) թ., զիրհեմ:

Առաջ ին երես՝ կինարոնում երեք տողով մուսուլմանական հավատի խորհրդի առաջին մասը, ճիշտ այնպես ինչպես գրված էր նախորդ 84, 85 տարեթվերի օրինակների վրա։ Երջանավոր գրությունը⁵ ։ بِسْمِ اللَّهِ صَرَبَ هَذَا الدِّرْهَمَ بِدِبْيَلِ سَنَةِ سَتٍ وَ ثَمَنِينَ ։ Այս ամենը ամփոփված է Յ համակենտրոնական շրջագծերի մեջ, որից հետո գրամի եզերքում անցնում է ևս մեկ շրջագիծ, որի և նրա նախորդի միջև Յ տեղով նշված են կետեր։

Երեքորդ երես՝ կինարոնական ու շրջանավոր գրությունների, ինչպես նաև մեացած մանրամասնությունների նկարագիրը

¹ В. Тизенгаузен, Монеты Восточного Халифата, СПБ, 1873, стр. 328.

² St. Lane-Poole, Catalogue of the collection of oriental Coins belonging to col. C. Seton Cuthrie, Coins of the Amawi Khalifehs, Hertford, 1874, p. 11, № 59, pl. II.

³ А. Марков, Инвентарный каталог мусульманских монет Императорского Эрмитажа, СПБ, 1897, III дополнение, стр. 961, № 250.

⁴ R. Vasmer, Der Münzkund von Peuth, Revel, 1927, s. 68, № 1, [Beiträge zur Kund Estl., 4—5 Hefi].

ճիշտ նույնն է ինչ ԱՆ 1, 2-ի օրինակների առթիվ նշեցինք, սակայն այս գիրհնեմը դրվագված է մի ուրիշ կնիքով:

Տրամադրիծը՝ 26 մմ, քաշը՝ 2,48, տե՛ս նկ. 3: Երկու կողմերի վրա էլ պահպանվել է եզերքից ամրացված օղակի ներքը:

Դվինի 86 (=705) թ. գիրհնեմի արև օրինակը ներկայաւում պահպանված է Պետական Էրմիտաժի արևելյան դրամների ժողովածուում¹:

Պ Ե Բ 6 ն

4. Պաքիւ առանց տարեթվի, Փելս.

Առաջին երես. կենտրոնում՝ ²الله ॥ اَحَدُ اللَّهِ ॥ الصَّمْدُ:

Երջանավոր գրությունը՝ ³عَلَى اللَّهِ اَللَّهُ وَحْدَهُ لَا شَرِيكَ لَهُ:

Երկրորդ երես՝ կենտրոնում, երեք տողով մասում անական հավատի խորհրդաբանի երկրորդ մասը՝ ⁴الله ॥ رَسُولُهُ مُحَمَّدٌ:

Երջանավոր գրությունը (sic) بدبیل جاز (sic) بسم الله حضر هذا الفلس:

Երկու կողմերին էլ, եզերքից քաշված է շրջադիմ:

Տրամադրիծը՝ 20—21 մմ, քաշը՝ 3,25 գրամ, վիճակը՝ լավ, տես նկ. 4:

5. Պաքիւ առանց տարեթվի, Փելս.

Նկարագիրը ամբողջությամբ նույնն է ինչ ԱՆ 4 օրինակին, բայց դրվագված է մի այլ կնիքով:

Տրամադրիծը՝ 20 մմ, քաշը՝ 3,32 գրամ, վիճակը՝ լավ:

Դվինի այս երկու (ԱՆ 4, 5) պղնձյա գրամմերը գտնվում են Պետական Էրմիտաժի արևելյան դրամների բաժնուում⁶:

Դվինի անունը կրող Օմայան հարստության այլ գրամմեր մեզ

1 B. Տիզենգայզեն, նշ. աշխ., № 314. B. Dorn, Inventaire des monnaies des khalifes orientaux, Stp. 1877, p. 150, I, № 4. Մարկով, նշ. աշխ., էջ 2, № 33:

2 Ալլահը ॥ միակ է Ալլահը հավիտենական է:

3 Թարգմանությունը նույնը ինչ տրված է ԱՆ 1 գիրհնեմի կենտրոնական դրության առթիվ:

4 Մուհամմեդը առաքյալն ॥ է Ալլահի:

5 Ալլահի անունից գրվագված է այս գելը Պաքիւում թույլատրված (շրջանառության համար): Ջաز բառի թարգմանությունը տվել ենք Lane Poole, Catalogue of Oriental coins in the British Museum, I, London, 1875, № 181.

6 A. Մարկով, նշ. աշխ., էջ 62, №№ 1169, 1170:

հայտնի չեն: Բնդհանրապես դրանք խիստ հազվագեպ են: Նույնիսկ պղնձլա դրամները, որոնք թողարկվում էին մանր առ ու ծախուի համար և սովորաբար տեղական շովալի սահմաններից դուրս չեին անցնում, մինչև օրս չեն հայտնաբերվել ոչ Դպինի ավերատիներում, և ոչ էլ Հայաստանի տերիտորիալում մի այլ տեղ, որքանով ալդ հայտնի է մեզ արձանադրված դրամական գյուտերից:

Դպինի փողերանոցը այս ժամանակաշրջանում թողարկել է գերազանցապես զիրճնեմներ ու ֆելսեր ոչ թե քաղաքի, այլ Արմինիայի անունով:

Խալիֆաթի քաղաքներում թողարկվող դրամների վրա սովորաբար նշվում էր ոչ թե փողերանոցի քաղաքավին անունը, այլ այն նահանգի, որի զիրավոր քաղաքում կտրում էր զիրճնեմը:

Դա մի համընդանուր տրադիցիա էր, որ գոյություն ուներ 8—10-րդ դդ. առաջավոր արևելքի դրամահատության գործում: Ալյափես, օրինակ՝ Զերենջ քաղաքի դրամների վրա գրվում էր՝ «գրվագած է Ալշատանում», Արդիրիլի դրամների վրա՝ Արքբեցանում, Բերդաս (Պարտավ) քաղաքի դրամների վրա՝ Առուանում (Աղվանք) և այլն: Արդպես էլ Դպինի դրամների վրա գրվում էր «Նըրվագած է Արմինիայում» մակագրությունը: Սակայն մենք այստեղ կանդ չենք առնի Դպինի արգօրինակ (Արմինիական) դրամների վրա, որովհետև հրատարակության ենք պատրաստում մի առանձին քննախոսություն այդ մասին: Այնուհետև, Դպին քաղաքի անունը երևան է գալիս արարտական խալիֆաթի Արքանան հարըստության դրամների վրա: Ի տարբերություն Օմայանների, Արաւարանների օրոք դրամների վրա ալլես չէր նշվում Նուրանի 112-րդ սուրայի խոսքերը: Վերջինին փոխարինում է հավատի խորհրդարանի երկրորդ մասը: Բացի այդ գրվում էին նաև իշխանական անձնանուններ: Այսպես, օրինակ՝ Խալիֆա ալ-Մանսուրի (754—785) իշխանության տարիներին թողարկված դրամների վրա նշվում էր գահաժառանգի անունը՝ ալ-Մանդի: Վերջինին իշխանության ժամանակ (775—785) գրվում էր հենց իրեն գերագույն իշխողի՝ Խալիֆի անունը: Այնուհետև դրամներ թողարկում էին նաև նրա որդիների անուններով: Միաժամանակ հիշատակվում էին առանձին պետական պաշտոնյաների, նահանգային կուսակալների, փողերանոցների կառավարիչների և այլ էմիրների անուններ: Բոլոր դեպքերում անձնական անունները գրված էին մուսուլմանական հավատի խորհրդանիշ խոսքերի տակ, դրամի առաջին կամ երկ-

112—113 կամ առաջին առաջնական գործում էր հենց գերագույն իշխողի՝ Խալիֆի անունը: Այնուհետև դրամներ թողարկում էին նաև նրա որդիների անուններով: Միաժամանակ հիշատակվում էին առանձին պետական պաշտոնյաների, նահանգային կուսակալների, փողերանոցների կառավարիչների և այլ էմիրների անուններ: Բոլոր դեպքերում անձնական անունները գրված էին մուսուլմանական հավատի խորհրդանիշ խոսքերի տակ, դրամի առաջին կամ երկ-

բորդ երեսի կենտրոնական մասում։ Արբասլան գրամմաների տիպականության մեջ արտացոլվում էր քաղաքական ախ հիերարխիան, որ դրանուրված էր խալիֆաթի պետականության մեջ։ Դրամի վրա գրվագած անունները հիշատակվում էին խիստ կանոնիկ հաջորդականությամբ՝ 1-Ալլահ, 2-Մուհամմեդ, 3-Խալիֆ, որից հետո նշվում էին և այլ անձնանուններ։ Դիինի անունը կրող արդ կարգի դրամներից մեզ հայտնի օրինակներն հետեւալիներն են.

ԱԲԲԱՍՅԱՆ ՀԱՐՄԱՆԻԹՅՈՒՆ

Ա. Պ Ծ Ա Բ

Խ Ա Լ Ի Փ ա լ - Մ ո ւ թ ա վ ա ք ք ի ւ

(Հիշրայի 232—247 թթ.=մ. թ. 847—861 թթ.)

6. Թաբիւ հիշրայի 240 (=մ. թ. 854—855) թ., դիրիեմ.

Տարաբախտաբար մեր ձեռքի տակ չկա Դիլինի այս դրամը ոչ լրիվ նկարագրությունը և ոչ էլ նկարը։ Դրականության մեջ հաղորդման կարգով նրա գլուտի մասին առվում է Զ. Ալանի աշխատությունում։ Ենթագրաբար կարելի է տսել, որ իր տեսակով Դիլինի անունը կրող այս եզակի արծաթյա դրամը չի տարբերվել հիշրայի երրորդ դարի 30—40-ական թվականներին թողարկած նմանօրինակ դիրհեմներից։ Հայտնի է, որ Արևելյան խալիֆաթում սկսած ալ-Մութասիմի իշխանության (833—842) տարիներից մինչև 9-րդ դարի երկրորդ կեսը, բացի խալիֆի անունից, որ նշվում էր դիրհեմի երկրորդ երեսի կենտրոնական հատվածում (հավատի խոսքերի երկրորդ մասի տակ) ուրիշ ոչ մի անուն չէր հիշատակվում։ Բացի գրանից, սկսած 199 (=814/15) թ. արբասյան դիրհեմների առաջին կողմի վրա ավելանում է մի նոր շըրշանավոր գրություն ևս, Դուրանի 30-րդ սուրայի 4—5-րդ ուսունավորի խոսքերը¹ من قيل و من بعد و يوميذ يفرح الله المؤمنون بنصر الله: Ահա այս ավելաները հիմք են տալիս ենթագրելու, որ Դիլինում հիշրայի 240 (854/55) թ. դրվագած դիրհեմը իր երկրորդ երեսի վրա ունեցել է խալիֆ Մութավաքքիլի անունը,

¹ J. Allan, Unpublished Coins of the Chaliphate, p. 4, (Reprinted from the Numismatic Chronicle, fourth series, vol. XIX, London, 1919, p. 194).

² Ալլահին է պատկանում իշխանությունն ամենից առաջ և հետո կդա ժամանակ երբ ուղահավատները կուրախանան Ալլահի օգնությամբ։

իսկ մնացած մանրամասնոթլուննը ով, այնպես, ինչպես արդ ժամանակից արքասրան գիրնեմիկըն էին:

Պ Ա Ւ 6 հ

Մ ու հ ա մ մ ե ղ ա լ Մ ա ն դ ի

(Հիջրայի 158—169 թթ.=մ. թ. 775—785 թթ.)

7. Թարփիւ հիջրայի 159 (=մ. թ. 775/76) թ., էմիր ՅԱԶԻԴ
ԲԲՆ ՌԻՍՈՒՑԴԻ անունով, ֆելա.

Առաջին երես՝ կենտրոնում, երկու շրջադժերի մեջ երեք
տողով մուսուլմանական հավատի խորհրդաբանի առաջին մասը
կազմութեանի մի աստ-
ղաձե զարգ: Շրջանավոր գրութլունը¹ բարե պատճե պարզ: Շրջանավոր գրութլունը² առաջի առամի եղերքով քաշ-
լութ է շրջագիծ:

Երկրորդ երես՝ կենտրոնական գրութլունը մուսուլմա-
նական հավատի խորհրդաբանի երկրորդ մասը երեք տողով:

Համար մասկ մի ալսպիսի նշան՝ : Շրջանա-

վոր գրութլունը³, مَا أَمْرَ بِهِ الْأَمِيرُ يَزِيدُ بْنُ أَسِيدٍ أَعْزَرَ اللَّهَ نَصْرًا,
որից հետո գրամի եղերքից անցնում է շրջագիծ:

Տրամադրծը 24—25 մմ, քաշը՝ 3,70 գրամ, վիճակը լավ, (նկ.
6): Գոտնված է 1951 թ. Դվինի կենտրոնական թաղամասը պե-
ղեկիս: Պահպում է ՀԱՍԽ ԳԱ. Հայաստանի Պատմության թանգա-
րանում № 17173/17)⁴: Դվինի այս պղնձար գրամից երկու օրի-
նակներ էլ գտնվել են Դվինի ավերակներում, սակայն այն տար-
բերությամբ, որ արդ վերջինները գրվագած են տարբեր կնիքներով:

¹ Հանուն Ալլահի դրվագած է այս Փելոք Թարփիում հարյուր հիսուն
ինը թվականին:

² Ալ-էմիր Յազիդի Ռամանով, թող Ալլահը նրա փառքը
մեծացնի:

³ Հետագայում Հայաստանում դանքած Դվինի գրամների օրինակների
համար կնշենք միայն գույքամատյանի համարը, որի տակ պահպում է այն
ներկայում Հայկական ՍՍԽ ԳԱ. Հայաստանի Պատմության թանգարանում:

Ամբողջությամբ նման մի ֆելս էլ հայտնի է ե., Յամբառորի հրատարակությունից¹:

8. Դաքիս հիշրայի 159 (=մ.թ. 775/76) թ., իմ իր ՅԱԶԻԴԻ իբն ՈՒՍՎՅԴԻ անունով, ֆելս.

Նկարագիրն նույնն է ինչ տաված է նախորդ օրինակի վերաբերյալ, սակայն ինչպես կենտրոնական, այնպես էլ շրջանավոր գրությունները տեղ-տեղ մաշված են: Հաղիվ նկատելի են մնացել դրամի երկու կողմերի վրա կենտրոնական զբության տակ նշած դարբերը: Տրամադիծը 19—21 մմ, քաշը՝ 3,45, մաշված (նկ. 7):

Դաշնվել է 1954 թ. Դվինի պեղումներից (№ 17358/3):

Դվինի ալս 159 (775/76) թ., կտրված ֆելսերը ուշագրավ են նաև այն լուրահատուկ նշանով, որ քաշված է դրամի երկրորդ երեսի կենտրոնական գրության տակ: Ի՞նչ է այդ նշանը՝ փակադիր, թէ՞ զարդ, գեռես բացահայտված չէ: Սակայն ոչ Արմինիայի, ոչ էլ լայնածավալ խալիֆաթի այլ փողերանոցներից ոչ մեկը չի թողարկել ֆելսեր այդպիսի նշանով, որը միայն բավական է, որպեսզի Դվինի արդ պղնձա գրամը կարելի լինի իսկույն տարբերել Առաջավոր Արևելքի այլ քաղաքների գրամմերից:

Հ ա ր ո ւ ն ա ռ թ ա շ ի դ

(Հիշրայի 170—193 [թթ.=մ.թ. 786—809 [թթ.])

Դաքիս հիշրայի 182 (=մ.թ. 798/99) թ., իմ իր ԱԱՀԻ իբն ԱԱԼՄԻ անունով, ֆելս.

Առաջին երես՝ կենտրոնում երեք տողով մուսուլմանական հավատի խորհրդաբանը՝ Ա շ ر ի կ Ո ح د ه ॥ Ա ل լ լ Ո ح د ه ॥ Ա լ լ լ Ո ح د ه ॥ Ա լ լ լ Ո ح د հ ։ Այս ամենը բոլոր ված երկու շրջագծերով, որոնց միջև հինգ տողով փոքրիկ շըրշանիներ, լուրաքանչյուրի կենտրոնում կիտ:

Երկրորդ երես՝ կենտրոնում, շրջագծի միջ երեք տողով, Բ ن س լ մ م ا أ م ر ب ه ॥ أ م ر ب ه ॥ أ م ر ب ه ॥ أ م ر ب ه ॥ أ م ر ب ه ॥ أ م ر ب ه ॥ أ م ر ب հ ։

Շրջանավոր գրությունը՝

¹ E. V. Zambaur, Contributions à la Numismatique Orientale, I, Numismatische Zeitschrift, XXXVI, Vienne, 1905, p. 24—25.

² Ալ-էմիր Արդ Ալլահի հրամանով:

محمد رسول الله ضرب هذا الفلس بدبييل سنة اثنين و ثمانين
و هئي و سنه اربعين قرابه ٢١,٦٦, քաշը ٢,٣٥ գր., մաշված, եղբից մեկ տեղ
կոտրված, տե՛ս տախտակ Բ, նկ. 8:

Դանակի է 1954 թ. Դվինի կենտրոնական թաղամասի պե-
ղումների միջոցին (դրամ №—17380/8):

10. Պարփիւ հիջրալի 185 (=մ. թ. 801) թ., կմ ի ը ԱՍՍԴ
իբն ՅԱԶԻԴԻ անունով, Փելս.

Առաջին երես՝ կենտրոնում երեք տողով մուսուլմա-
նական հավատի խորհրդաբանի առաջին մասը, ինչպես նախորդ
օրինակի վրա, ներքեւում եռանկյունաձև գրվածքով երեք կետեր՝
..., արդ ամենը երկու շրջագծերի մեջ, որոնց միջև չորս տեղ
փոքրիկ շրջանիկներ, ըստ որում լուրաքանչյուրի կենտրոնում կետ:

Երեք որդ երես՝ կենտրոնում, կետերից բաղկացած շրջագծի
մեջ երեք տողով || الامير اسد || بن نزيده², այս գրու-
թյունից վերեւ՝ ³ على يدي مهد — շրջանավոր գրու-
թյունը՝ ⁴ بسم الله ضرب هذا الفلس (sic) بدبييل سنة خمس و ثمانين
و هئي و سنه اربعين قرابه ٢٢,٥ մմ, քաշը ٣,١٢ գրամ, վիճակը լավ, տե՛ս
նկ. 9: Դանակի ավելաներում, այժմ լան վերին Արտաշատ
գյուղի հանգում, ներկայումս պահպամ է ՀՍՍԾ: Դիտությունների
ակադեմիայի Հայաստանի Պատմոթյան թանգարանում (դրամ
№—8358): Նմանօրինակ մի պղնձյա գրամ էլ ներկայացված է
Պետական Էրմիտաժի արևելյան դրամների բաժնում⁵:

11. Պարփիւ հիջրալի 187 (=մ. թ. 802/03) թ., կմ ի ը ԱՍՍ-
ՀԱՍՍԵԴ իբն ՅԱԶԻԴԻ անունով, Փելս.

Առաջին երես՝ կենտրոնում, շրջագծի մեջ երեք տողով մու-
սուլմանական հավատի խորհրդաբանի առաջին մասը, ճիշտ այսպես

¹ Մուհամեդը առաջալին է Ալլահի գրվածք է այս ֆելս Դարիլում
հարյուր ութսուն երկու թվականին:

² Ալ-էմիր Ասադ իբն Յազիդի հրամանով:

³ Զեռամբ:

⁴ Մահդի (":):

⁵ Հանուն Ալլահի գրվածք է այս ֆելս Դարիլում հարյուր ութսուն
հինգ թվականին:

⁶ Государственный Эрмитаж, отдел нумизматики, рукописный ка-
талог аббасидских монет, № 48.

ինչպես նկարագրված է նախորդ ֆելսերի վրա: Կենտրոնական այդ գրության վերևում մի ալսպիսի նշան՝ ։, ներքեւում՝ աստղաձև զարդ: Եղբքից երկու կետերից բաղկացած շրջադժեր, որոնց միշտ հինգ տեղով փոքրիկ շրջանիկներ:

Երկրորդ երես. կենտրոնական գրություն, երեք տողով, առաջին մասում // الامير محمد بن يزيد¹, վերևում առաջին մասում գրված բառը լրիվ չի պահպանվել, նշանի է մնացել՝ « عبا ». որը կարելի է վերածել Արքաս(՝): Երջանավոր գրությունը ^{بسم}² Ալլահի օրին ամսամի եղբքում շրջագիծ:

Տրամագիծը 22 մմ, քաշը՝ 1.64 դրամ, վիճակը բավարար, տե՛ս նկ. 10:

Հայտարքերվել է Դվինի ավերակներում, ալժման Արտաշատ գյուղի հանգում, 1931 թ. համանվել է ՀՍՍՌ հստակեցների պահպանման կոմիտեին, իսկ հետագայում անցել է Պատմության թանգարանին (գրամ № 7709): Այս նոտին դրամից մեկ օրինակ էլ գտնվել է 1948 թ. պեղումների ժամանակ Դվինի կենտրոնական թաղամասում³: Մի այլ օրինակ էլ մեզ հայտնի է Պետական երմիտաժի արեւելան զրամների ժողովածուից⁴:

12. Պարիւ հիշյալի 187 (=մ.թ. 802/03) թ., էմիր Ալիկ ԶԱՅՏԱՐ. ԻԲՆ ԽԱՅՄԻ անունով, Փելս.

Առաջին երես՝ կենտրոնում մասուլմանական հավատի խորհրդաբանի առաջին մասը երեք տողով (բնագիրը և թարգմանությունն այնպես, ինչպես վերևում հիշյատակված օրինակներում): Կենտրոնական գրության վերևում և ներքեւում նշված է՝ ։ Այս բոլորն ամփոփված են երկու իրար զուգահեռ շրջադժերի մեջ, որոնց միջև հինգ տեղով երեւմ են զուգ-զույգ փոքրիկ շրջանիկներ:

Երկրորդ երես՝ կենտրոնական գրությունը երեք տողով՝ ⁵ մասմասում // الامير خزيرمه // بن خازم⁶

¹ Ալ-էմիր Մուհամմեդ իրն Յազիդի հրամանով:

² Հանուն Ալլահի դրամպած է այս ֆելսը Դարիլում հարյուր ութուն յոթ թվականին:

³ ՀՍՍՌ ԳԱՅ Հայաստանի Պատմության թանգարանի, գրամ № 3280:

⁴ Պետական երմիտաժի արեւելան զրամների ձեռադիր մատյան № 90 /520:

⁵ Ալ-էմիր Խուզայմա իրն Խազիմի հրամանով:

⁶ Չեսամը:

محمد رسول الله صرخ هذا الفلس بد بيل سنة سبع و ثمانين و مئة:

Տրամագիծը՝ 22,5 մմ, քաշը՝ 2,93 դրամ, վիճակը բավարար, տե՛ս նկ. 11: Դվինի պեղումներից³:

Նման ֆելսի մի այլ օրինակ էլ Ներկայացված է Պետական Երժիտաժի արևելյան դրամների ժողովածում⁴:

13. Պարիչ տարեթիվը չնշված է, էմիր ԽՈՒԶԱՅՄԱՆ ԻԲՆ ԽԱՋԻՄԻ անունով, Փելս.

Առաջին երես՝ կենտրոնական դրությունը և մնացած մանրամասնություններն ամբողջությամբ այնպես, ինչպես նախորդ օրինակը, սակայն դրվագած մի այլ կնիքով:

Երկրորդ երես՝ կենտրոնական ու շրջանավոր գրությունները տարբերվում են նախորդ օրինակից նրանով, որ ալմանդ տարեթիվից չեն պահպանվել միավոր և տասնավորներն արտահայտող բառերը: Դատելով չնշված առանձին տառերի նշմարվող հետքերից ենթադրությամբ կարելի է ընդունել [سنة سبع و ثمانين و مئة] անուն:

Դրամի տրամագիծը՝ 22 մմ, քաշը՝ 2,15, տե՛ս նկ. 12: Դանիվել է 1951 թ. Դվինի կենտրոնական թաղամասի պեղումներից, Պահպատմ է Հայաստանի Պատմության թանգարանում (դրամ № 17173/15ա):

Հայտնի է, որ էմիր Խուզայմա իրն Խաղիմը եղել է Արմինիայի ոստիկանը հիջրայի 187—191 թթ.⁵: Մեզ ընդունելի է թվում այս ֆելսի 187 թ. կարված լինելը, որովհետեւ ամբողջությամբ նույնանման դրամ, ինչպես տեսանք, թողարկվել է հենց այդ թվականին: Տարբերությունն միայն այն է, որ այս օրինակը դրվագած է մի այլ կնիքով: Կենտրոնական դրության տակ նշված բառը գըրված է անորոշ ձեռվ՝ բավականաբար:

¹ Ալ-Քասիմ:

² Մուհամմեդն առաքյալն է Ալլահի, դրվագած է այս ֆելսը Դարիուս հարյուր ութսուն յոթ թվականին:

³ ՀՍՍԾ ԳԱ Հայաստանի Պատմության թանգարան, դրամ № 14973:

⁴ A. Марков, նշ. աշխ., II լրացրցիւ մաս, էջ 94, № 520:

⁵ R. Vasmer, Zur Chronologie der arabischen Statthalter von Armenien unter den Abbasiden, von as-Saffach bis zur Krönung Aschots I., 750—887. Wien, 1931, s. 48. Հայրանյան, Արարացի ոստիկանները Հայաստանում. [ՀՍՍԾ Գիտությունների ակադեմիայի Հասարակական դիտությունների «Տեղեկագիր», № 8, Երևան, 1956, էջ 116, № 59]:

14. Դարիւ հիշրալի 187 (=մ.թ. 802/03) թ. էմիր ԽՈԽ-
ԶԱՅՄԱՆ ԻԲՆ ԽԱԶԻՄԻ անունով, Փելս.

Նկարագիրը նույնն է ինչ № 12, բայց դրվագած է ուրիշ կնիքով: Երկրորդ երեսի շրջանավոր գրությունը տեղադրությունը մաշված է:

Տրամագիծը 25 մմ, քաշը՝ 2,20 գրամ, տե՛ս նկ. 13:

Գտնվել է Դվինի կինտրոնական թաղամասի պեղումներից 1954 թ. ամռանը: Ներկայումս պահպամ է Հայաստանի Պատմության թանգարանում (գրամ № 17380/4):

15. [Դարիւ], հիշրալի 189 (=մ.թ. 804/05) թ., էմիր ԽՈԽ-
ԶԱՅՄԱՆ ԻԲՆ ԽԱԶԻՄԻ անունով, Փելս.

Առաջին երես՝ կինտրոնական գրությունը մուսուլմանական հավատի խորհրդաբանի առաջին մասը ճիշտ նույն ճեղով ինչ նախորդ օրինակի վրա էր: Ներքեռում զարդանշան: Այդ ամենը բոլորված է կետակոր շրջագծով, որի վրա երեք տեղ նշված են մեկական օդակաձև շրջանիկներ:

Երկրորդ երես՝ կինտրոնում գրությունը նույնն է ինչ № 12, սակայն ներքեռում՝ վարչությունը շրջանավոր գրությունը՝ Ա. بسم الله الرحمن الرحيم ضرب هذا الفلس [بـ بـ] سنة تسع و ثمانين و مـئـة այս բոլորից հետո եղերքով անցնում է մի շրջագիծ:

Տրամագիծը՝ 22,5 մմ, քաշը՝ 2,10, մեկ տեղ ճեղքված, տե՛ս նկ. 14: Գտնվել է 1955 թ. Դվինի ավերակների այն մասում, որ այժմ տեղացիներն անվանում են «Հնաբերդի գաղտ»: Գրամը պահպամ է Հայաստանի Պատմության թանգարանում (№ 17359/11):

Այս գրամի վրա քաղաքի անունը չի պահպանվել: Սակայն նկատի ունենալով այն, որ Արմինիայի մեջ Արքայանների ժամանակ և ոչ մի տեղ նման տիպի գրամ չի թողարկվել բացի Դվինից, նամանավանդ որ հիշրալի 189 թ. էմիր Խուզարմա իբն Խազիմի անունով ոչ միայն ֆելսեր, այլև գիրհեմներ էին թողարկվել, ուստի վտառ կերպով կարելի է վերագրել այս պղնձյա գրամը Դվինին:

16. Դարիւ հիշրալի 189 (=մ.թ. 804/05) թ., էմիր ԽՈԽ-
ԶԱՅՄԱՆ ԻԲՆ ԽԱԶԻՄԻ անունով, Փելս.

Առաջին երես՝ նկարագիրը նույնն է ինչ նշեցինք նախորդ օրինակի համար, բայց դրվագած մի այլ կնիքով:

Երկրորդ երես՝ կինտրոնում գրությունն նույնն է, ինչ նախորդ օրինակի, ներքեռում մաս, բայց էմիրի հայրանունը դրված է բարեկած է:

Տրամադիմը 23 մմ, քաշը՝ 2,75 դրամ, հղություն տեղաբանական, տե՛ս նկ. 15։ Դանված է Դպինի երկրորդ տեղամասի 1938 թ. պեղութման բարից։ Պահպում է Հայաստանի Պատմության թանգարանում, (№ 14691)։

17. Նույնը, ինչ № 16, բայց դրվագած այլ կնիքով։

Տրամադիմը 23,5 մմ., քաշը՝ 3,05 դրամ, վիճակը լավ, տե՛ս նկ. 16։ Գաճակել է 1954 թ., Դպինի ստորին բերդի պեղութման բարից։ Պահպում է Հայաստանի Պատմության թանգարանում (№ 17380)։

Մուհամմեդ ալ-Ամին

(Հիջրայի 193—198 թթ. = մ. թ. 809—813 թթ.)

18. Ֆարիւ 194 (=մ. թ. 809/10) թ., էմիր ԱԲԴԱԼԱԶԻՐ ՄՈՒՀԱՄՄԵԴԻ անունով, Փելս.

Առաջին երես՝ կենտրոնում երեք տողով մուսուլմանական հավատի խորհրդաբանի առաջին մասը՝
الله ألا || الله وحده
لَا شريك له ||
որի առաջին մասի առաջին մասում երկու շրջագիծ, իսկ վերջիններիս միշե չորս փոքրիկ շրջանիկներ։

Երեքորդ երես, կենտրոնական մասում երեք տողով
مما أمر به || الأمير عبد الله || بن محمد
կիսալտոնաձե մի նշան՝² Ամր ալ-Աբաս առաջին մասում
պրոտունը՝³ Մուհամմեդ Ռուֆ Աբ Բիլ Տուն և Աբ Տուն մասում
պրոտունը՝⁴ Աբ Աբ Դաւուդ է ներսից ու դրսից շրջագծով։

Տրամադիմը՝ 17—20 մմ, քաշը՝ 2,10 դրամ, վիճակը լավ, տե՛ս նկ. 17։ Դանված է Դպինի ավելակների IV տեղամասում 1952 թ.
և այժմ պահպում է Հայաստանի Պատմության թանգարանում (№ 17283/6)։

Դպինի այս ֆելսի մի այլ օրինակ էլ գանվում է Էրմիտաժի արհելլան դրամների բաժնում⁵։ Էրմիտաժի օրինակը առաջին անգամ որոշել է Մ. Բրոսեն։ Վերջինս գրամի վրա նշված տարեթիվը ընթերցել է որպես 154 թ.։ Հետագայում Մ. Բրոսեյի այդ որոշումը նույնությամբ հրատարակել է Վ. Տիզենգայզեն, այ-

¹ Ալ-էմիր Աբդալահ Իբն Մուհամմեդի հրամանով։

² Արդարություն։

³ Մուհամմեդն առաքյալն է Ալլահի դրվագած է այս ֆելսը Դպինիում հարյուր իննասուն չորս թվականին։

⁴ Պետական Էրմիտաժ գրամադիտական բաժնի ձեռագիր մատյան, Աբրամյան դրամներ, պղինձ № 53։

⁵ В. Տիզենգայզեն, Աշ. աշխ. № 837։

նոհեան դա աճմուգոխ ընդունվել է Ա. Մարկովի կողմից¹, իսկ ավելի ուշ արդպես էլ հիշատակված է Ռ. Ֆասմերի Հայոստանի արարական ոստիկանների ժամանակադրությանը նվիրված աշխատության մեջ²: Դվինից հայտնաբերված օրինակի որոշման կապակցությամբ մենք հնարավորություն ունեցանք ստուգելու էրմիտաժում պահպաղ ալդ նույն տվյալներով ֆելսը: Պարզվեց, որ իրականում ալդ պղնձա գրամի շրջանավոր գրությունն սկսվում է ոչ թե սովորական **اللَّهُمَّ إِنِّيْ نَسِيْخُكَ** (=հանոն Ալլահի) խոսքերով, այլ **اللَّهُمَّ رَبِّ الْعَالَمِينَ** (=Մուհամմեդն Ալլահի առաքյալն է) փորմուլայով: Բացի գրանից, մեր կարծիքով Գետական էրմիտաժի օրինակի վրա տարեթվի մեջ տասնավորը ոչ թե **نَسِيْخُكَ** (=հիսուն) է այլ կիսով չափ մաշված է և ոչ մի հիմք չկա հանկու նման վերջնական որոշում: Բոլորովին նույնատիպ ֆելսի մի օրինակ ևս հայտնաբերվել է ՀՍՍՌ Մարտունու շրջանի վերին Գետաշեն գյուղում³. այս օրինակի մեջ շրջանավոր գրությունը սկսվում է **اللَّهُمَّ رَبِّ الْعَالَمِينَ** խոսքերով, այսինքն ճիշտ այնպես ինչպես Պետական էրմիտաժի և մեր նկարագրած Դվինից գտնված ֆելսի վրա է նշված:

Ե. Ա. Պախումովը, որն առաջին անգամ հրատարակել է Գետաշենում հայտարարված Դվինի ալդ ֆելսը, չի նշել շրջանավոր գրության հիշյալ առանձնահատկությունը, իսկ գրամի թողարկման տարեթիվը կարգացել է որպես 164 թիվ⁴: Ե. Ա. Պախումովի որոշման հետ ևս մենք չենք կարող համաձայնվել, որովհեան գրամի վրա տարեթվի մեջ տասնավորը նշանակող բառը լավ չի պահպանվել. նրա գրաված տեղում դրամը եզրից մաշված է: Բացի գրանից ալդակաղ նշմարվում է ոչ թե 6 այլ 7 զծեր, հետեւարար ընթերցումը կասկածելի է թվում: Սակայն այժմ երբ Դվինում հայտարարվել է վերոհիշյալ գրամի շատ ավելի լավ պահպանված օրինակը, որի վրա հստակությամբ կարգացվում է ֆելսի թողարկման տարեթիվը՝ 194, ուստի կարելի է վերջինս ընդունել հիմք՝ վերականգնելու նմանօրինակ ֆելսերի զնշված բառերը: Դվինի 194 թ. այդ ֆելսը, ինչպես տեսանք, թողարկված է էմիր Աբդալ-

¹ A. Марков, նշ. աշխ., էջ 18, № 132:

² R. Vasmer, նշ. աշխ., էջ 27:


³ Տե՛ս Հայաստանի Պատմության թանգարան, գրամ № 14578:

⁴ E. A. Пахомов, Монетные клады Азербайджана и других республик, краев и областей Кавказа, вып. VI, № 1603, Баку, 1954, стр. 45.



Fig. 41. *Pseudomonas* *marinimucilosa* m.





11. 12. 13. 14. 15. 16.

լահ իրն Մուհամմեդի հրամանով, որի անունն էլ գրված է դրամի կենտրոնական դրամներին:

Հարկ է նշել, որ Արբասյան հարստության Հայաստանում իշխող արար ոստիկանների ժամանակագրությանը նվիրված աշխատաթուների մեջ¹ չի հիշատակվում այդ էմիրի անունը: Ու Ֆամերի կարծիքով Արդալլահ իրն Մուհամմեդը եղել է Դվինի ոստիկանը հիշրայի 154—159 (=770—776) թթ.²: Մեր նկարագրած օրինակը ցույց է տալիս, որ նրա իշխանությունը Դվինում եղել է 194 (-809/10) թվականին: Ուստի այս դրամը մեծ արժեք ունի ոչ միայն զուտ դրամագիտական առումով, այլ նաև Դվինի քաղաքական պատմության համար: Եվ եթե, նույնիսկ, նկատի ունենանք Դվինի միայն պղնձյա դրամներն, ապա մեզ կներկայանա Հայաստանում իշխող արքասյան էմիրների ժամանակագրությանը վերաբերող ճետելալ տվյալները՝

Հիշրայի 159 (=մ. թ. 775/76) թ. իշխել է էմիր Յաղիդ
իրն Ռւսացիքը:

Հիշրայի 182 (=798/99) թ. իշխել է էմիր Սահիդ իրն Սալմը:

Հիշրայի 185 (=801) թ. իշխել է էմիր Ասադ իրն Յազիդը:

Հիշրայի 187 (=802/03) թ. իշխել է էմիր Մուհամմեդ
իրն Յաղիդը:

Հիշրայի 187—189 (=802/03—804/05) թթ. իշխել է
Խուզայմա իրն Խազիմը:

Հիշրայի 194 (=809/10) թ. իշխել է էմիր Արդալլահ
իրն Մուհամմեդը:

Այս տվյալներն անշուշտ Դվինի և ընդհանրապես Արմինիայի քաղաքական պատմության համար վստահելի փաստեր են:

Ամփոփելով մեր խոսքը կարելի է ասել.

1. Հայաստանում արաբական խալիֆաթի գերիշխանության հաստատման հենց սկզբից Դվինի փողերանոցը թողարկում է

¹ M. Chazarian, Armenien unter der arabischen Herrschaft, Marburg, 1903, SS. 38—43; Zambaur E., Manuel de généalogie et de Chronologie pour l'Historie de l'Islam, Hanovre, 1927, p. 173—179; Հ. Նալբանդյան, Արաբացի ոստիկանները Հայաստանում, էջ 116—117:

² R. Vasmer, նշ. աշխ. էջ 27:

դրամներ քաղաքի անունով։ Մինչև օրս մեզ հասած ալր կարգի դրամներից ամենավաղ օրինակը թողարկվել է 84 (=703) թ., իսկ ամենաուշը՝ 240 (=854/55) թ.։ Իրենց տեսակի բնորոշ գծերով դրանք դասակարգվում են Օմայան և Աբրասյան տիպի դրամների շարքում։

2. Դվինի փողերանոցը քաղաքի անունով թողարկել է զըլ-խավորապես պղնձյա դրամներ, որոնք հայտնաբերվում են մեծ մասամբ քաղաքի ավերակների պեղումներից։ Եվ դա հասկանալի է, որովհետեւ պղինձը թողարկվում էր քաղաքի մանր առ ու ծախքի համար և սովորաբար Հայաստանի սահմաններից դուրս չէր անցնում։

3. Հաղվադեպ են Դվինի անունը կրող արծաթյա դրամները։ Այս հանգամանքը պետք է բացատրել նրանով, որ Դվինի փողերանոցը՝ արծաթ դրամներ է հատել մեծ մասամբ երկրի անունով։ Երբ Դվինը արաբական խալիֆաթում «Արմինյա» կոչվող նահանգի գլխավոր քաղաքն էր։ Միշազգալին առևտրական գործարքները կատարվում էին հիմնականում արծաթյա դրամներով։ Դվինի արծաթյա դրամները Հայաստանի և նրան հարևան երկրների միջև ընթացող ապրանքափոխական շնորհիվ անցնում էին տարբեր ժողովուրդների մեջ, իրենց վրա ունենալով Շիրվագած է Հայաստանում արաբերեն մակագրությունը։ Այդպիսի դրամները, ըստ արձանագրված տվյալների, մեծ մասամբ հայտնաբերվել են 9—10-րդ դր. արծաթյա դրամական գանձերի մեջ, որոնք գտնվել են Հայաստանից գուրս, մասսամբ Անդրկովկասի, բայց առավել մեծ չափով Արևելյան ու Հյուսիսային Եվրոպայի երկրներում։ Հատկապես Վոլգայի միջին հոսանքին մոտակա շրջաններում, հյուսիսային սլավոնների քաղաքներում, Մերձբալթյան երկրներում, Բալթիկ ծովի լեհական ու գերմանական ափերում, Սկանդինավյան երկրներում, մամնագրապես Գոտլանդ կղզում և այլ վայրերում։ Դրանք վկայում են այն մասին, որ 9—10-րդ դր. միջադալին առևտրի մեջ գործոն մամնակցություն է ունեցել Հայաստանը և նրա գլխավոր քաղաք Դվինը։

4. Դվինի այն դրամները, որոնք հայտնաբերվում են քաղաքի ավերակների պեղումներից և տարեց տարի հարուտացնում են ՀՍՍՌ։ Պետական պատմական թանգարանի դրամագիտական ժողովածուն, հանդիսանում են վստահելի վկայություններ Հայաստանում իշխող արաբ ուստիկանների ժամանակադրության համար։ Դրանք խոսում են նաև Դվինի փողերանոցի գործունեության մասին։

МУШЕГЯН Х. А.

О НЕКОТОРЫХ МОНЕТАХ ДВИНА VIII—IX ВВ.

(Р е з ю м е)

В статье описываются дошедшие до нас куфические монеты с обозначением места их чеканки — арабского названия города Двин — Дебил.

Монетный двор Двина с начала VIII в. чеканил серебряные и медные монеты, которые по элементам типа распределяются на две основные группы: омайадские и аббасидские. Самые ранние серебряные монеты Двина с обозначением места чеканки именем города относятся к 84—86 гг. хиджры = 703—705 гг. н. э. С таким обозначением монетный двор Двина чеканил главным образом медные монеты. Среди них наиболее часто встречаются следующие аббасидские фельсы:

159 года хиджры = 775/76 гг. = н. э. с именем эмира Йазида ибн Усайда

182	"	"	= 798/99	"	"	эмира Саида ибн Салма
185	"	"	= 801	"	"	Асада ибн Йазида
187	"	"	= 802/03	"	"	Мухаммеда ибн Йазида
187—189	"	"	= 802/805	"	"	Хузайма ибн Хазима
194	"	"	= 809/10	"	"	Абдаллаха ибн Мухаммеда

Эти монеты выпускались для местной разменной торговли. Они представляют интерес для изучения экономической и политической истории Двина. Таблицы 41 и 42 (монеты).

